

ՂԱՐՂԱԼԽ ՓՈՔՐ. 20 տուն քուրդ. քրդերէն Անգղ կը նշանակէ, 2 ժամ ի հարաւ Էսմէրի: Երկու Ղարղալի գիւղերն 7—8 ժամ Գարա-Քիլիսէէ ի հարաւ աւելի մօտ կը գտնուին Մանազկերտի, քան թէ Բագրեանդայ, սակայն քաղաքական բաժանմամբ Անգաբի կը պատկանին:

ՂԱՐԱՂԱՃ (սե փայտ կամ թեղի).—30 տուն ք. մէկ ժամ հարաւ պզտի Ղարղալի, հանդէպ Ղարաղաճի, մեծ Ղարղալի արեւելեան հարաւն, ժայռերու մէջ տեսնուած են արձանագրութիւնք, ըստ քրդաց:

ՂՐՊԷ ԿԷՁԱՆ (Աւերակի անցք).—15 տուն ք. 1 ժամ Ղարաղաճի Եփրատի վերան՝ աջ կողմ շինուած:

Այս գիւղը հողի տակից հանուած է կարասներ և պղնձեայ անօթներ, նաև անընթեռնելի տառերով արձանագրութիւն, որ էր մի քառակուսի քարի վերայ

ՔԵՍՈՒԿ.—10 տուն ք. բն. 1 $\frac{1}{2}$ ժամ արեւմուտք Ղրպէ կէչենայ, 1 ժամ ճանապարհէ բարձր և Քեսուկայ ջրի վերայ: $\frac{1}{2}$ ժամ Քեսուկայ արեւմտեան հիւսիսն կամուրջ մի կայ՝ Քեսուկայ կամուրջ անունով:

Քեսուկ կարած կը նշանակէ, արդէն նոյն անունով գիւղի մօտից հոսող գետն կը կտրէ, կը բաժանէ վերելից Խնուսայ սարերն, ներքից Մանազկերտի վիճակի մէկ մասն, ի հիւսիս թողլով Անգաբ:

ՀԱՍԱՆ—ՓԱՇԱ.—150 տուն ք. 1 ժամ արեւմտեան հարաւ Քեսուկ գիւղի, Քեսուկ ջրի աջ ափին վերայ որ Մանազկերտի կը պատկանի, այժմ հայկական գերեզմանատունք շատ կան, երեք չորս լեզուաւ արձանագրութիւնք կան, յունարէն, հայերէն, թուրքե-